24304

331.87
U-78

1940

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

# ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏԱՇԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

331.87
Ա-78

...ԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
...ԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1940

05 AUG 2013

05 FEB 2001

*Ստախանովյան շարժման նշանակությունը նաև այն է, որ նախապատրաստում է սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պայմանները*

(ՍՏԱԼԻՆ)

# ԴԻՄՈՒՄ

## Հայկական ԽՍՀ խնայդրամարկղների և Պետվարկի սիստեմի բոլոր աշխատողներին

## ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ.

*Հայկական ԽՍՀ Ֆինժողկոմատը սոցիալիստական մրցման պայմանագիր է կնքել եղբայրական Վրացական և Ադրբեջանական Ֆինժողկոմատների հետ:*

*Համաձայն այդ պայմանագրի՝ խնայդրամարկղների սիստեմի կոլեկտիվը պարտավորություն է վերցրել՝*

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

24307

1) Փոխառության մուծումների 1940 թ. տարեկան պլանը քաղաքում կատարել մինչ դեկտեմբերի 25-ը, իսկ գյուղում—մինչև դեկտեմբերի 20-ը:

2) Ավանդների ներգրավման տարեկան պլանը գերակատարել 5%-ով:

3) 1940 թ. ներգրավվող միջոցների արժեքն իջեցնել 5 տոկոսով՝ ի դիմաց նրա պլանային արժեքի:

Բացի այդ՝ մենք Բաքվում կնքել ենք սոցիալիստական մրցման առանձին պայմանագիր՝ Ադրբեջանական ԽՍՀ Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Վարչության կոլեկտիվի հետ, որը պարունակում է իր մեջ մեր սիստեմի գործնեյության հետ կապված հիմնական բոլոր խնդիրները:

Մեր կոլեկտիվը քննության է առել այդ պայմանագիրն և տվել է իր հավանությունը (պայմանագիրը կցված է այս նամակին):

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ



Ստալինյան Երրորդ Հնգամյակը պահանջում է ներքին միջոցների առավելագույն մոբիլիզացիա: Այդ ներքին միջոցների մեջ քիչ տեղ չեն գրավում պետական վարկի միջոցով հավաքվող խնայողությունները:

Հայկական ԽՍՀ Խնայդրամարկղների և Պետվարկի Վարչության կոլեկտիվը համոզված է, որ փոխառության և ավանդների պլանների կատարումը և գերակատարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ խնայսիստեմի ամբողջ կոլեկտիվը գիտակցելով կուսակցության և կառավարության կողմից նրա վրա դրված պատասխանատվությունը, բոլշևիկորեն կպայքարի սոցիալիստական մրցման պայմանագրով վերցրած կետերը լավագույն կերպով իրագործելու համար:

Դիմելով Ձեզ, մենք համոզված ենք, որ դուք կձեռնարկեք բոլոր միջոցները՝ սոցիալիստական մրցման պայմանագրով վերցրած պարտավորությունները պատվով կատարելու համար:

Անհրաժեշտ է միայն ել ավելի ծավալել մեր տնտեսում սոցիալիստական մրցումը, հարվածայնությունը և գերազանցիկությունը:

Մենք ապրում ենք սոցիալիզմից դեպի կոմունիզմն անցնելու ժամանակաշրջանում: Մեր Մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԸ մեր առաջ խնդիր է դրել 10—15 տարվա ընթացքում տնտեսապես հասնել և անցնել Յեվրոպայի տնտեսապես ամենազարգացած կապիտալիստական երկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Այդ պատմական մրցության մեջ



հաղթող մենք ենք լինելու, որովհետև՝ «Յերրորդ Հնգամյակի դրոշն իրենց ձեռքն են վերցնում միլիոնավոր բանվորներ, բազմամիլիոն աշխատավորներ: Դեպի կոմունիզմը տանող մեր շարժման գլխավոր գիծը ցույց է տալիս՝ մեր ԼԵՆԻՆԻ–ՍՏԱԼԻՆԻ կուսակցությունը, մեր բոլշևիկյան համադումարը, մեր ՍՏԱԼԻՆԸ: (Մոլոտով)

Կեցցե՛ սոցիալիստական աշխատանքի Հերոս, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ՝ մեր հարազատ մեծ ՍՏԱԼԻՆԸ:

Հայկական ԽՍՀ Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի վարչության կոլեկտիվ

9 փետրվարի, 1940 թ.
ք. Յերևան

## ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ վարչությունների միջև

*ՊԱԽԴ-ի և ՊՎ-ի Ադր. ԽՍՀ և Հայկ. ԽՍՀ վարչությունների աշխատողների կոլեկտիվները մտնելով Ստալինյան Յերրորդ Հնգամյակի անվան սոցիալիստական մրցման մեջ, իրենց վրա պարտականություն են վերցնում 1940 թվին հասնել յերկու յեղբայրական հանրապետությունների խնայողական սիստեմի գործնեյության բոլոր բնագավառներում յեղող աշխատանքների զգալի բարելավմանը:*



*Յերկու յեղբայրական հանրապետությունների վարչությունների աշխատողների կոլեկտիվները ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի պատմական վորոշումների հիման վրա՝ կողայքարեն սոցիալիստական շինարարության ֆինանսավորման համար առավելագույն միջոցներ մոբիլիզացիայի յենթարկելու և ԽՍՀՄ պաշտպանության հզորությունը 1940 թվին ել ավելի ամրապնդելու համար, հիշելով, վոր Յերրորդ Հնգամյակի պլանի կատարումը հանդիսանում է ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդրի հաջող կատարման գրավականը— այն է՝ տնտեսապես հասնել և առաջ անցնել Յեվրոպայի և Ամերիկայի առաջավոր կապիտալիստական յերկրներից:*

*Յերկու վարչությունների կոլեկտիվները 1940 թվի համար իրենց վրա յեն վերցնում հետևյալ պարտականությունները՝*

*1. Կատարել փոխառության մուծքերի տարեկան պլանը քաղաքում մինչև դեկտեմբերի 25-ը, իսկ գյուղում—մինչև դեկ-*

ամրերի 20-ը, ապահովելով պարտատոմսերի ժամանակին հանձնումը բաժանորդներին:

2. Ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղի ավանդների ներգրավման պլանը գերակատարել ոչ պակաս քան 5 տոկոսով:

3. Իջեցնել ներգրավվող միջոցների արժեքը 5 տոկոսով՝ 1940 թվի պլանային արժեքի դիմաց:

4. Թույլ չտալով բաժնեգրության նվազում 1940 թվի ընթացքում, պայքարել 1939 թվին առաջացած նվազման գումարն իջեցնելու համար:

5. Պլանավորումը կատարել Գլխավոր վարչության դիրեկտիվներին խիստ համապատասխան: Պլանները ժամանակին իջեցնել տեղերին:

6. Ամբողջությամբ կատարել խնայողական դրամարկղների վերանորոգման պլանը, ապահովելով վերանորոգման աշխատանքները տեխնիկական նախահաշիվներով և աշխա-



տանքի ցուցակներով: Խնայդրամարկղներն ապահովել ցուցանակներով և կնիքով:

7. Ժամանակին իջեցնել տեղերին եկամուտների և ծախսերի պլանը: Վճռական պայքար մղել ֆինանսական կարգապահության խախտողների դեմ և հասնել այն բանին, որպեսզի ինչպես ըստ հանրապետության, այնպես էլ ըստ առանձին կենտ (շրջ.) խնայդրամարկղների՝ գերածախսեր չլինեն:

8. Գլխավոր վարչության ցուցմունքների հիման վրա՝ վերակառուցել ռեվիզիոն աշխատանքները և հասնել՝

ա) վերստուգման և ստուգման ամեն յեռամսյակային պլանների կատարմանը և բացի նախատեսված պլանից կատարել շրջ. (կենտ) խնայդրամարկղների կրկնակի վերստուգում, ապահովելով վերստուգման արդյունքների քննումը վերստուգողների գալու օրից ոչ ուշ, քան 8 օրվա ընթացքում:

ր) Վերստուգման աշխատանքների վորակի բարձրացմանը, մղելով ամենավճռական պայքար չարաշահումների և հափշտակումների դեմ սիստեմում, հասնելով վնասների չափի զգալի իջեցմանը՝ 1939 թվի համեմատությամբ:

9. 1939 թվի տարեկան հաշվետվությունները ներկայացնել սահմանված ժամկետից 5 որ առաջ և բարձր վորակով:

10. Յեռամսյակային և ամսական հաշվետվությունները ինչպես շրջ. (կենտ) խնայդրամարկղների գծով, այնպես էլ վարչությունների գծով՝ ներկայացնել Գլխավոր վարչությանը ժամկետից առաջ և բարձր վորակով, ապահովելով հաշվետվությունների վերլուծումն ու ռեկլամացիան յուրաքանչյուր հաշվետվությունն ստանալու որից վոչ ուշ, քան 15 որվա ընթացքում:

11. Լրիվ չափով լիկվիդացիայի յենթարկել իրացումն ավարտված փոխառությունների հաշվարկումները, առ 1940 թ. հունվարի 1-ն յեղած դեբիտորական պարտքը,



ինչպես վարչությունների բաժնում, այնպես էլ շրջ. (կենտ) խնայդրամարկղների բաժնում, մաքրել 87 հաշիվը բոլոր վոչ իրական գումարներից և գանձել անցած տարիների վնասները:

12. Հաշվապահ-հրահանգիչների ուժերով հետազոտել տարվա ընթացքում հաշվառման և հաշվետվության դրությունը բոլոր հաշվետու վարչություններում և շրջ. (կենտ) խնայդրամարկղներում վոչ պակաս 60 տակսար, կազմելով համապատասխան ակտեր:

13. Լրիվ չափով կատարել խնայդրամարկղների ռեժիմի, աշխատողների վորակի բարձրացման ձեռնարկումների պլանը (դասընթացքային և այլ ձեռնարկումներ) Գլխավոր վարչության ցուցմունքներին համապատասխան:

14. Սահմանված ժամկետում ավարտել շրջ. (կենտ) խնայդրամարկղների և վարչությունների բոլոր աշխատողների պետտեխքննությունների հանձնումը: Ապահովել տեխուսուցման կազմակերպումն ու անցկա-

ցումն ինչպես վարչություններում, այնպես էլ ՀԲՋ. (կենտ) խնայդրամարկղներում։

Բարձրացնել տեխմինիմումի ունկնդիրների և կուրսանտների առաջադիմությունը, վերացնելով անբավարար գնահատականները և 1939 թվի համեմատությամբ բարձրացնել լավ և գերազանց գնահատականների տոկոսը։

15. 1940 թ. առաջին կիսամյակի ընթացքում ապահովել ապարատի ընտրությունն ու կոմպլեկտավորումը համապատասխան վորակի ստուգված աշխատողներով, առավելապես ի հաշիվ կանանց աշխատանքի ներգրավման։

16. Որինակելի ձևով պահել խնայդրամարկղների սիստեմի աշխատողների գործերը, վորոնց հաշվառումը համաձայն գոյություն ունեցող հրահանգների՝ պետք է կենտրոնացված լինի միութենական Հանրապետությունների վարչություններում և ապահովել գործերի ձևակերպումը տեղերում։



17. Ապահովել ակտիվի ստեղծումը յուրաքանչյուր խնայողական դրամարկղի շուրջը՝ վոչ պակաս քան 10 ակտիվիստ-ագիտատորներից, սիստեմատիկորեն անցկացնել նրանց հետ զրույցներ և հրահանգներ, նաև տանել այդ ակտիվիստների հաշվառումը։

18. Պետփոխառությունների շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի և կտրոնների ստուգման և վոչընչացման հանրապետական հանձնաժողովի աշխատանքները դնել ԽՍՀՄ ՑԺԿ հրահանգին խիստ համապատասխան։

19. Տիրաժային արժեքներն վոչնչացնել ամեն ամիս ու իր ժամանակին և ակտերն ուղարկել ՀԲՋկենտխնայդրամարկղին։

20. Գրավոր ցուցմունքների միջոցով հասնել 1938 թ. նոյեմբերի 3-ի № 59 հրահանգի բոլոր ցուցմունքների կատարմանը՝ ՀԲՋ. (կենտ) խնայդրամարկղների կողմից։

21. Իր կոչման բարձրության վրա դնել ինչպես վերադաս մարմինների, այնպես էլ

իր վարչության դիրեկտիվների կատարման հսկողությամբ, նաև կարգի բերել արխիվային տնտեսությունը:

Ծավալել լայն մասսայական-բացատրական աշխատանք, սոցմրցման մեջ ներգրավելով խնայդրամարկղների սիստեմի աշխատողներին, կիրառելով գերազանցիկների և հարվածայինների փորձի փոխանակումը:

Այս պայմանագրի պարտավորությունների կատարման փոխադարձ ստուգումը կատարել տարեկան յերկու անգամ:

Պայմանագրի կատարման ինքնաստուգումն անցկացնել ամեն յեռամսյակում, կազմակերպելով նաև հաշվետու վարչությունների, ՇՐՋ (կենտ) խնայդրամարկղների և առանձին աշխատողների միջև կնքված պայմանագրերի ստուգումն ամեն յեռամսյակում:

Այս պայմանագրի արբիտր են՝ Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությունը և ֆինբանկային աշխատողների Միության Կենտրոնական Կոմիտեն:



Վարչությունների կոլեկտիվների լիազորությամբ՝ պայմանագիրն ստորագրեցին՝

Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Ադր. ԽՍՀ վարչության պետ՝
ՄՈՒՍԼԻՄՈՎ.

Գործառնական բաժնի վարիչ՝
ԲԱՐԱՅԵՎ.

Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Հայկ. ԽՍՀ վարչության պետ՝
ՍԱՐԳՍՅԱՆ

Գործառնական բաժնի վարիչ՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղ. Բաքու

1 փետրվարի, 1940 թ.

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

*Գլավլիտի լիազոր* Ա—2136․
*Պատվեր* № 158․ *տիրաժ* 1000

Հայկական ԽՍՀ ԺԿԽ–ին կից «Խորհրդային Հայաստան» հրատարակչության տպարան,
Յերևան

10к

9814

ՀՀ Ազգային գրադարան

NL0060142